

II

ՂԱԶԱՐ ՓԱՐԱԿԵՑԻՆ ՄԱՇՏՈՑՅԱՆ ԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի, Հայ գրերի ու դպրութեան մասին վկայող V դ. երրորդ պատմիչը Ղաղար Փարպեցին է: Ի տարբերութիւն Կորյունի և Մովսես Խորենացու, նա ոչ աշակերտել, ոչ էլ տեսել է Մաշտոցին, բայց սովորել է Մաշտոցի սան Աղան Արծրունու և նրա քույր Ձվիկ տիկնոջ մոտ, որպէս Վահան Մամիկոնյանի հետ: Ուսումը շարունակել է նաև արտասահմանում, ուսումնասիրել իմաստասիրութիւն՝ հմտանալով հռետորական արվեստի մեջ:

Հայոց մարդպան Վահան Մամիկոնյանի հանձնարարութեամբ 486 թ. հետո շարադրել է «Պատմութիւն Հայոց» երկը: Պատմութեան մեջ Մաշտոցին և գրերի գյուտին նվիրված մասի հիմնական աղբյուրը Կորյունն է, որին նա անսահմանորեն վստահում է, և մեկ այլ աղբյուր, որ հանվանե չի հիշում:

Ի՞նչ է պատմում Ղաղար Փարպեցին Մաշտոցի և Հայոց դպրութեան մասին:

Մաշտոցը Տարոն գավառի Հացեկաց գյուղից էր, Վարդանի որդին, մանուկ ժամանակ սովորել է հունական դպրութիւն, գինվորական ծառայութիւն է կատարել Հայոց Խոսրով թագավորի արքունիքում և արքունի ատենադպիրն էր: Արքունի դպիրները այն ժամանակ Հայոց թագավորների վճիռների ու հրովարտականքների գործը ասորի և հույն գրով էին վարում:

Մի քանի տարի այդտեղ անթերի սպասավորելուց հետո, ձեռնադրվում է և մտնում բազմամարդ մի վանք, դառնում երեւելի կրօնավոր, հրաժարվում աշխարհիկ և երկրային ամեն տեսակ զբաղմունքներից: Դառնում է անապատական և ապրում ուրիշ միաբանների հետ, մինչև «յամս հինգերորդ արքային Հայոց Վռամշապհոյ եղբոր Խոսրովու»: Այստեղ Փարպեցին խորհուրդ է տալիս ընթերցողին. «Եւ զայս թէ կամիցի ոք գիտել հաւաստեալ ի Պատմութենէ դրոց առն ցանկալի Կորեան, աշակերտի նորին երանելոյն Մաշտոցի, կարգացեալ տեղեկացսի զվարս կենաց նորա և զիւր Հայերէն նշանագրացն, թէ երբ, կամ ո՞ւր և կամ յոյր ուրուք ձեռն գտանէ, թագաւորին Հայոց Վռամշապհոյ ջերմեռանդն խնդրելով, զոր կարգեաց գրելով ճշմարտապէս յառաջադրեալ այրն հոգևոր Կորիւն. ուստի և մեր բաղում անգամ կարգայով տեղեկացեալ հաւաստեալ»¹:

¹ Ղ ա զ ա Ր Փ ա Ր Կ Ե Կ Ի. Հայոց պատմութիւն. Թուղթ Վահան Մամիկոնյանին (այսուհետև՝ Ղ ա զ ա Ր Փ ա Ր Կ Ե Կ Ի), աշխարհաբար թարգմանութիւնը և ծանոթագրութիւնները Բագրատ Ուլուքաբայանի. Երևան, 1982, էջ 30:

Ղազար Փարպեցին Մաշտոցի կյանքի ու գործի, մանավանդ «գիւր հայերէն նշանագրաց» մասին կարճ է կապում և հղում է Կորյունի գիրքը:

Մատնացուլց անելով Կորյունի գիրքը, Փարպեցին զգալ է տալիս, որ Մաշտոցի հնարած հայերեն գրերի գյուտի պատմութիւնը չի գետեղելու իր պատմութեան մեջ, այլապես ավելորդ կդառնար իր հղումը. «Եւ զայս թէ կամիցի ոք գիտել հաւաստեալ ի Պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան, աշակերտի Նորին երանելոյն Մաշտոցի կարգացեալ տեղեկասցի...»:

Փարպեցին շարադրում է մաշտոցյան գրերի նախագյուտյան և հետգյուտյան իրադարձութիւնները: Նախ գրում է Մաշտոցի ապրումների, մտորումների, դրանց պատճառ հանդիսացող իրոշութիւնների մասին, որոնք նրան հասցրել են հայոց գրեր ունենալու անհրաժեշտութեան գաղափարին և կրկին բերել Վաղարշապատ կաթողիկոս Սահակ Պարթևի մոտ:

Մաշտոցի բազմաժամանակյա մտածութեան առարկան էր նախ՝ Հայաստան աշխարհի ուսումնածարավ երիտասարդութեան ջանքերի, առավել ևս ծախսերի գործադրումը՝ հեռագնաց ճանապարհներով և դեգերումներով, որոնք իրենց օրերը մաշում էին ասորական գիտութեան դպրոցներում: Ապա՝ Հայաստանի եկեղեցիներում ու վանքերում ասորերեն կատարվող արարողութիւնները և Սուրբ Գրքի ընթերցանութիւնները, որից ժողովուրդը ոչինչ էլ չէր հասկանում, իսկ եկեղեցու պաշտոնյաները ոչնչի էլ չէին հասնում. «Զայս ի բազում ժամանակաց զմտաւ ածեալ երանելի առն Մաշտոցի, և փղձկացեալ յանձն իւր, մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ բարբառով, շահել զոգիս արանց և կանանց առհասարակ յամենայն եկեղեցիս բազմութեանն»²:

Այս մտորումներով նա գալիս է Վաղարշապատ: Կաթողիկոսը, լսելով նրան, քաջալերում է. «Զօրացեալ պինդ կաց, առեալ ընդ քեզ և այլ արս օգնականս ի քահանայից՝ զոր ես պատուիրեմ. և ուր տկարանայք ի կարգել զհեգեհնայն՝ բերեալ առ իս ուղղեմ զայն, քանզի յոյժ դիւրին է զիւտ իրացդ զոր հայցես, բայց նախ արժան է մեզ զգացուցանել թագաւորին զպէտս այսպիսի մեծ և կարևոր խնդրոյ. վասն որոյ և քան զաւուրս ինչ յառաջ ոչ բազումս, առեալ բանք եկեղեցւոյ յաղագս կարօտութեան այդպիսի պիտոյից՝ ասացեալ է ուրումն ցարքայ, թէ տեսի նշանագիրս հայերէն առ ումեմն եպիսկոպոսի ի գեօղ միում, և թագաւորն յիշէր զասացեալսն, քանզի և ինձ նա պատմեաց»³:

Սահակ Պարթևի և Մաշտոցի առաջին գործը լինում է հայոց գրերի և դպրութիւն ստեղծելու գաղափարի և նրա կարևորութեան մասին Վռամ-շապուհ թագավորին տեղյակ պահելը: Այստեղ էլ թագավորը պատմում է վանական Հարել ասորուց լսածը հայկական նշանագրերի մասին: Մերուպը այս նույն բանը, որ առաջին անգամ լսել էր կաթողիկոսից, այստեղ լսում է նաև թագավորից: Ոգևորված այրերը՝ Ս. Սահակն ու Մաշտոցը, ոգևորում են նաև հայոց արքային. «Ճեպեա յաղագս մեծ և օգտաբեր աշխարհիս Հայոց գիւտիս այսորիկ ի ժամանակս քո, որ շատ աւելի առ յա-

2 Նույն տեղում, էջ 30:

3 Նույն տեղում, էջ 32:

պայսն բերէ քեզ շահ, յիշատակ անմոռաց և օգուտ երկնաւոր վայելից, քան զիշխանութիւն թագաւորութեանդ քո, և կամ որպէս յառաջ քան զքեզ նախնիքն քո էին յազգէն Արշակունեաց»⁴: Թագավորն ուրախանում է, որ այդպիսի հոգևոր պարգև է տալիս Հայոց աշխարհին, և հատուկ հրամանով Վահրիճին ուղարկում է Միջագետք, որը և դանիելյան գրերը բերում է Հայաստան: «Իսկ արքայն Հայոց սուրբ կաթողիկոսաւն Սահակաւ և Երանելեաւն Մաշտոցիւ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբելէ ուրախ լինէին»⁵:

Փարպեցին անմիջապես շարունակում է. «Եւ յսպէս գիպեալ գիւտի նշանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշտոց, յերկրելով զնա սուրբ հայրապետին Հայոց Սահակայ, դիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգադրութեան գրենոյս և հեգենային ուղղաձայնութեան, տալով նմա օգնականս և այլ արս բանիբունս և մտացիս ի քսահանայիցն Հայոց, որք էին առ սակաւ մի, որպէս Երանելին Մաշտոց, մերձաւորեալք ի յունարէն հեղենայինսն, որում առաջնոյն անունն էր Յոհան ի գաւառէն Եկեղեաց, ե երկրորդին Յովսէփ ի Պաղանական տանէն, և երրորդին Տէր ի Խորձենոյ, ե չորրորդին Մուշէ ի Տարօնոյ: Որոց օգնելովն զօրէր երանելի Մաշտոց, Հանդիպեցուցանէր զՀայերէն աթութայսն ըստ կարգման սիւրվբայիցն Յունաց, ստէպ հարցմամբ և ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Սահակայ զաթութայիցն դաղափար, ըստ անսայթաքութեան յունին: Վասնզի ոչ լինէին բաւական ի վճարել անսխալ ուղղակի, առանց առաջնորդելոյ նոցա սրբոյն հայրապետին Սահակայ, որ յոյժ առ լցեալ անցուցանէր վարժիք զբազում զիտնաւքն Յունաց, եղեալ կատարելապէս Հմուտ երգողական⁶ տառիցն և հոետորական յորդասաց յայտնաբանութեան, ևս առաւել տեղեկացեալ վիլիսոփայական արուեստիցն ցուցանիւր:

Կարգեալ այնուհետև, Փրկչին առաջնորդութեամբ, զգիր գրենոյն հայերէնի և հելլենացին ուղղեալ յօրինուածս՝ ցանկային կարգել գայրոցս և ուսուցանել բաղմութիւն մանկտուոյ»⁷: Վաղարշապատում բացվում է արքայահիմն, մաշտոցագիր դպրոցը:

Գր. Խալաթյանցը «Ղազար Փարպեցի և գործք նորին» աշխատութեան մեջ, քննելով Փարպեցու դործը և անդրադառնալով Հայոց գրերի մասին հատվածին, գտնում է, որ Ղազար Փարպեցին նսեմացրել է Մեծ Մեսրոպի վաստակը. «Թերևս առ ի գերազանց ցուցանելով ո՞Սահակ, որ այսպիսում ներբողիլնի հազիւ թէ կարօտ իցէ»: Եվ տարակուսում է. «Աստանօր հարցումն մանաւանդ թէ ապշումն ելանէ ընդ առաջ ակամայ. Ղազարայ իդեն արդեօք բանքդ...»: Եվ պատասխանում է. «Պարտ է զիտել, զի այն

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում:

6 Ն. Պ ո ղ ա Ր յ ա ն. Նորագյուտ Հատված Ղազար Փարպեցու Հայոց պատմութեան. — «Բանբեր Մատենադարանի», Հ. 8, Երևան, 1967, էջ 263–273: «Երգողական»-ի փոխարեն Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց մատենադարանի ձեռագրերից մեկում պահպանվել է «քերդողական» ձևը, որն ավելի պատշաճում է կրթութեան ժամանակի մակարդակին, մանավանդ որ «երգողականը» արդեն «վիլիսոփայական արուեստից» մեջ կար:

7 Ղ ա ղ ա Ր Փ ա Ր պ Ե ց Ի, էջ 34–36:

մասն Ղազարայ Պատմութեան, յորում զնշանագրացն պատմի գիւտէ և ըստ ոճոյն կրէ նշմարանս ինչ աղավաղման կամ բռնի եղծման»⁸:

Ղազար Փարպեցու շարադրանքը քննելով, գերմանացի նշանավոր հայագետ Հ. Մարկվարտն այսպես է արտահայտվում. «Մաշտոցի դեպի Ասորիք կատարած ուղևորութիւնը և նրա հետ կապված հանգամանքները Ղազարն ամբողջութեամբ լռութեան է մատնում:

Սա մի միտումնավոր շեղում է, որն, անշուշտ, բխում է շատ ցայտուն կերպով դրսևորված այն անսահման ձգտումից, որի միջոցով Սահակով հմայված Ղազարն ուզում է Սահակին վերագրել ոչ միայն Աստվածաշնչի թարգմանութեան, այլև նույնիսկ հայ գրերի հորինման գլխավոր վաստակը: Իսկ սրա համար բնականաբար պետք է, որ դեպքերի վայրը տեղափոխվեր Հայաստան և Մաշտոցից խլվեր արդարութեամբ վաստակած փառքի պսակը:

Ղազարն արժանի է սաստիկ կշտամբանքի՝ իր կատարած այս փորձերի համար, մի փորձ, որը կարելի է նշել որպես պատմական փաստերի աղավաղում:

Բարեբախտաբար այս փորձը Կորյունի հաղորդած անաղարտ տեղեկութեան պահպանված լինելու շնորհիվ ի դերև է ելնում»⁹:

«Փարպեցին անում է մի խառնակ պատմութիւն, որ բնավ նման չէ ո՛չ Խորենացու և ո՛չ Կորյունի պատմածներին, և ինքն իր մեջ էլ խիստ հակասական է, — գրում է Մանուկ Աբեղյանը: Բացի այդ, Փարպեցին դրում է հայերեն գրերի գյուտի պատմութիւնը, ոչ թե լիովին, այլ այն և այնքան, որքան հարկավոր է ցույց տալու համար Սահակ կաթողիկոսի կատարած դերը այն գործի մեջ ... նրա նպատակը եղել է բարձրացնել Սահակին»¹⁰:

«... Գիւտի նշանագրացն» ասելով, ուրեմն, Ղազար Փարպեցին ի նկատի ունի միայն դանիելյան նշանագրերի գյուտը, իսկ հայերեն գրերը, որ այժմ գործածում ենք, դանիելյան նշանագրերն են: Արդյո՞ք Ղազար Փարպեցու գրածն այս մասում աղճատել են հետագայում, թե նա ինքն է այսպես դրել:

Բայց երկրորդ դեպքում նրա գրածը կհակասեր Կորյունի մասին սկզբում գրածին, թե ինքը Փարպեցին շատ անգամ կարդալով Կորյունի գիրքը՝ հավաստի տեղեկացել է Մաշտոցի վարքի մասին և «գիւր հայերէն նշանագրացն»:

Հավանական է աղճատումը¹¹:

Հ.Կ.Տ. Սահակյանը «Գրոց գյուտը» փոքրիկ հոդվածում, «Ս. Մեսրոպի հորինած բառարանը» վերնագրի տակ գրում է. «Ս. Մեսրոպ բռնադատված էր ամենեն առաջ հունարենե հայերեն բառարան մը շինելու:

... Շատերը Խորենացու և Փարպեցու այս խոսքը, «Հանդիպեցուցաներ զհայերեն արթութեայն ըստ անսայթաքութեան սիղորայիցն ի հելլենացուն» կը հասկնան ս. Մեսրոպայ՝ հայերեն տառերը հունականին կարգով

8 Գ Ր. Խ ա լ ա թ յ ա ն. Ղազար Փարպեցի և գործք նորին. Մոսկվա, 1863, էջ 68–73:

9 Հ. Մ ա Ր Կ Վ ա Ր Մ. Հայոց այբուբենի ծագումը և ս. Մաշտոցի կենսագրութիւնը. — «Մեսրոպ Մաշտոց» հոդվածների ժողովածու. Երևան, 1962, էջ 133:

10 Մ. Ա բ ե Ղ յ ա ն. Երկեր. Հ. Գ. Երևան, 1968, էջ 356:

11 Մ. Ա բ ե Ղ յ ա ն. Մեսրոպ Մաշտոցը և գրի ու գրականութեան սկիզբը. — «Մեսրոպ Մաշտոց», էջ 253–254:

չարելը: 24 տառի առջև տառեր չարելը (մէկ էջով ցանկ մը հորինելը) ինչ նշանակութիւն կրնա ունենալ՝ որ բոլոր պատմիչները հիշատակեին և այնքան հանդիսավորութեամբ, այնքան հուզոված:

Դարձյալ Փարպեցի կը հիշատակե, թե Հովհան, Հովսեփ, Տեր և Մուշե ս. Մաշտոցի օգնութեամբ կը հանդիպեցնեն «գհայերէն աթուրթայան ըստ կարգման սիլորայիցն յունաց, ստեպ հարցմամբ և ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Իսահակայ զաթուրթայիցն գաղափար, ըստ անսայթաքութեան յունին...»:

Որքան անտեղի է կարծել, թե չորս հոգովոց հանձնաժողով մը կազմվեր էր... հայերեն տառերը հունականին առջև չարելու համար... և այս տառերու մասին ստեպ հարցնեին և սովբեին ս. Սահակեն... վասն զի, կավելացնե Ղազար, ոչ լինեին բավական ի վճարելն ուղղակի առանց առաջնորդելու նոցա սրբո Հայրապետին Սահակա...

Մենք գիտենք որ ս. Մեսրոպ հունականի տեղյակ էր... «Վարժեալ հելլենական զպրութեամբն... եկեալ հասեալ ի գաւառն Արշակունեաց Հայոց Միծաց, կացեալ յարքունական դիւանին (Կորիւն)»: անկարելի է ընդունիլ թե քարտուղար ս. Մեսրոպ անկարող ըլլար հունարեն այբուբենն անգամ անսխալ ճանչնալու, հավանական է է դարձյալ, որ ս. Սահակ հունարեն տառերը լավ դիտարկուէ համար միայն՝ հունաց շատ մը գիտուններեն նախադասելու առիթը տար պատմչին...

Այս ամենը կցուցանե, թե տառադարձութեան ցանկին ավելի երկար, կարևոր և տաժանելի աշխատութեան մը վրա է խոսքը, բառարանի մը վրա. այս բանիս կը հանդիսն ոչ եթե ենթադրութեամբ, այլ աններող ճշտութիւն մը սահանջելով պատմիչներու բառերուն նկատմամբ...

Պետք է ուշ դնել նաև, որ «սիլլոբոս» «վանկ» միայն չի նշանակեր, այլ նաև դասավորված ցանկ, ցուցակ, ըլլա բառերու, ըլլա անվանց:

Համենայն դեպս անկարելի է «հանդիպեցուցանե, դհայերեն աթուրթայան» խոսքը հասկնալ երկու այբուբեններու բաղդատութիւնը միայն, որովհետև այդ աշխատութիւնը կատարված էր գրոց գլուտի սկիզբը, ոչ եթե վերջը¹²:

Ե. Քասունին դրում է. «Կորյունի և Փարպեցու քիչ մը անորոշ կարգ մը բացատրութիւններեն հավանութեամբ կարելի է մակաբերել թե Մաշտոցի ամենեն առաջին և գլխավոր մեկ գործն է եղած հունարենն (հավանորեն նաև ասորերենն) հայերեն գործնական բառարանի մը հորինումը, կերևի թե հունարենն ասորերեն նախասլես գոյութիւն ունեցող բառարան մը իրրև հիմ առնելով: Հարկավ սուրբ Սահակ այ օգնած է այդպիսի բառարանի մը կազմութեան (Փարպեցի, էջ 32), որուն անհրաժեշտութիւնը ակներև է այնչափ թարգմանութիւններուն արաղ և ուղիղ կատարման համար:

... Այդ (Փավստոսի) գրքի հեղինակը մեկե ավելի լեզուներ գիտե և իր արամադրութեան ներքև բառացուցակներ, բառագրքեր ուներ և իր ճոխ (հայերեն) բառամթերքը իսկապես հիշողութիւնն է է որ մեղ կուտա, այլ բառագրքերեն:

12 «Բազմավէպ», Վենետիկ, 1907, էջ 441-443:

Ե դարու կեսերեն սկսյալ թարգմանութեանց կամ խմբագրութեանց մեջ աչքառու երևույթ մըն է հաճախ երկու, երեք կամ ավելի հոմանիշներու մեկ տողի մեջ իրարու ետև շարվիլը: ... Շատ կարծիքներ հայտնած են սույն հետաքրքրական երևույթը բացատրելու համար ... Ի բաց առեալ սա վարկածը, թե թարգմանիչ խմբագիրը իր առջև գտնվող բառարանի դիմաց նշանակված մեկե ավելի հայերեն փոխարեններու մեջն ամենաճիշտը չկարենալով որոշել, զանոնք իրարու ետև շարեր է:

Իրապես բառարաններ կային Դ դարուն Բյուզանդիոնի մեջ... և Ներսես Մեծ և իր որդին Սահակ Պարթև առանց տարակույսի Պոլսո մեջ տեսած էին նմուշներ այս բառարաններե, և թերևս, Հայաստան բերին»¹³:

* * *

Ինչպես տեսնում ենք, ուսումնասիրութունների հեղինակները Ղ. Փարպեցու մոտ մաշտոցյան գրերի գյուտի պատմութեան հատվածում նկատում են բնադրի «աղճատում», «եղծում», հեղինակի կողմից «միտումնավորութուն», սկզբնաղբյուրի ոչ ճիշտ ընկալում և այլն:

Սակայն հետագա ուսումնասիրութուններից պարզվում է, որ այդ «աղճատումն» ու «եղծումը» ոչ թե Փարպեցուց է, այլ գալիս է նրա աղբյուր Կորյունի «Վարք Մաշտոցի» գրքից, և ոչ թե հեղինակ Կորյունից, մի բան, որին ինքը՝ հեղինակ Կորյունն էլ տեղյակ չի եղել, թե ինչ է տեղի ունեցել իր գրքի հետ, գրելուց հետո՝ V դարում:

Այդ ժամանակից սկսած Կորյունի գրքում դանիելյան գրերի շարադրանքն ունեցել է այժմյան տեսքը, այսինքն՝ «... Իսկ արքային հանդերձ միաբան սրբովքն՝ Սահակաւ և Մաշտոցիւ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբելէն ուրախ լինէին»:

Ապա առեալ երանելի Հոգաբարձուացն զյանկարծապիւտ Ինդրելին, Հայցէին ևս մանկունս մատաղս, որով զնշանագիրսն արծարծել մարթասցեն:

13 Ե. Բ. Կ. Կ. Կ. Պատմութիւն հին Հայ դաստիարակութեան, Պեյրութ, 1959, էջ 41-43: Հեղինակը ծանոթագրութեան մեջ գրում է. «Ղազար Փարպեցին (էջ 34-36) կը գրե. թե Մեսրոպ Մաշտոց «Հանգիսեցուցանէր զհայերէն աթուրթայս ըստ կարգման սիւլաբայիցն Յունաց», բայց ստեպ «Հարցմամբ և ուսանելով սուրբ կաթողիկոսն Սահակաւ, գաթութայիցն գաղափար. ըստ անսայթաքութեան Յունին»:

Օրմանյան (Ազգապատում, 193, էջ 276) իրավամբ կը զարմանա թե «Մեսրոպ Մամոսատի մեջ Հայ այբուբենը կատարելագործել և Առակաց գիրքն այ հաջողապես հայերենի թարգմանելու հետո՝ ինչ հարկ ունեւր հայերենի վանկերը (հեգելու կերպը) ս. Սահակեն սորվելու, և թե հայերեն վանկերը հունարենի վանկերուն անսայթաքութեամբ հանդիպեցնելը ինչ նշանակութուն կրնար ունենալ: Ինչու Մաշտոց և ընկերները «ոչ լինեին բավական ի վճարել անսխալ ուղղակի, առանց առաջնորդելու նոցա սրբո Հայրապետին Սահակա»:

Մեր համոզմամբ՝ Ղազար Փարպեցին այս նախադասութունները գրավոր աղբյուրն մը քաղեր է, որու միտքը շիտակ չէ կասկեցած ինքը, և այսպես հունարենն հայերեն բառարանին հորինման համար ըսվածը սխալմամբ գրի գյուտին կատարելագործման համար մեկնած է:

Արդարև, ասորերեն աթուրթայ և հունարեն սիդրեա՝ վանկ կը նշանակեն (ըստ Գաբամանյան բառարանի «նշանագիրք և գրերուն կապը», ուր նշանագիրք մասը ավելորդ է, և միայն «գրերուն կապը» - վանկ կըսվեր): Բայց անկարելի չէ, որ սույն ասորի և հույն բառերն այդ ժամանակ «բառարան» իմաստով ալ գործածված ըլլան:

Մենք արդեն տեսանք, թե Մաշտոց այնչափ խորապես հմուտ չէր հունարեն լեզվին՝ որչափ Սահակ Պարթև: Ուրեմն Սահակ Հայրապետը մեծ օգնութիւն մը պետք է տված ըլլա Մաշտոցին և անոր աշակերտներուն՝ հունարենն հայերեն բառարանի հորինման ատեն, մասնավորապես հունարեն բառերուն ճիշտ հայերեն գաղափարը (նշանակութիւնը) տալու մեջ» (էջ 43):

Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել, որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ երանելին հասանէր, և իբրև ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր, և նովին նշանագրովք տանէր»¹⁴:

Ինչպես տեսնում ենք, այս վերջին պարբերությունը «Ապա առեալ» բառերով սկսվող և «նշանագրովք տանէր» ավարտվող հատվածը, իր տեղում չէ, չի վերաբերում դանիելյան գրերին: Ղազար Փարպեցին այս բանը նկատել է և Կորյունի գիրքը «բազում անգամ կարդալով», ելք է փնտրել իր շարադրանքում այս հանգույցի լուծման համար: Եվ գտել է:

Նախ ընթերցենք Փարպեցու գրքի առաջաբանը, ապա վերստին անդրադառնանք նրա հանձնարարականին:

Ղազար Փարպեցին փառաբանելով Կոստանդնուպոլիսը նաև որպես քաջ «ուսայլների քաղաք», որտեղից «իմաստության վտակները տարածվում են ամեն կողմ», տարակուսում է, թե Բյուզանդացի Փափստոսը կարող էր «արդյոք լսողներին տհաճ բաներ շարադրել իր սլատմության մեջ»: Եվ պատասխանում է. «Ոչ այդ չի կարող պատահել: Ուստի ես տկարամիտս, այդ գործն անհավատալի կարծելով ասում եմ՝ գուցե թե հանդուգն ու անկիրթ մեկը լրբարար իր ձեռքը վերցնելով՝ գրեց, ինչ որ կամենում էր: Կամ էլ պատշաճին անընդունակ մեկը փոփոխելով իջացրեց... Հասկացողները հեշտությամբ իրարից կտարբերեն գիտունների խոսքերն ու անմիտների շաղակրատությունները»¹⁵:

Փարպեցին իր պատվիրատուի մասին դրում է. «Արթնամիտ խորհրդականությամբ լեցուն, քաջ ու ամենագետ Տեր Վահանը, Հայոց գորավարն ու Մարդպանը, որ անձամբ եղավ Հայոց աշխարհի բազում և անհամար գործերի ուղղություն տվողն իր իշխանության սրբում, ուրիշներին ևս նույնն էր հորդորում:

Ինչպես որ Հայաստան աշխարհի հոգան էր քաշում մյուս բոլոր արժանավոր գործողություններով, առավել ևս հարմար ու պատշաճ համարեց այս՝ երկրորդ գրքի պատմության մնացած տեղից շարունակել և շարադրել նրանից հետո Հայոց աշխարհում կատարվածը, մեծավ զգուշությամբ գրել ու մեկ առ մեկ դասավորել բոլոր հոգևորականների առաքինությունները և քաջ աղամարզկանց սխրանքները: Որպեսզի ժողովրդական բազմությունները, հոգևորականների բարի վարքերը լսելով, ցանկանան նմանվող լինեն նրանց ճգնություններից և խիղախներն էլ, լսելով առաջներում գործածված քաջությունների մասին, բազմապատկեն իրենց անձնական սխրանքները, իրենցից հետո թողնեն անվանի հիշատակ իրենց անձերի ու ազդի համար, իսկ ծուլերն ու վատերը, անձամբ տեսնելով այս ամենը, և լսելով այլոց սլարսավանքները, բարի նավասանձից կրթվելով՝ ջանան լավանալ:

Եվ այս օրինակից դուրսացնելով, ստիպում է մեզ Մամիկոնեից անբ Վահանը՝ Հայոց գորավարն ու մարզպանը, որի հրամանը հասավ ինձ՝ Փարպեցի Ղազարս:

14 Կ ո Ր Յ ո Ւ Ն. Վարք Մաշտոցի (այսուհետև՝ Կ ո Ր Յ ո Ւ Ն). Երևան, 1941, էջ 44:

15 Ղ ա զ ա ր Փ ա ր պ Ե ց Ի, էջ 13, 16:

Նա դաստիարակվել և ուսում է առել առաքինակրոն և երանելի Աղանի մոտ, որը հրաշալի ու ականավոր Արծրունյաց տոհմից էր...

Եվ ահա այսպես Մամիկոնեից տեր Վահանը՝ սպարապետն ու մարզպանը Հայոց, հարկադրաբար ստիպեց մեզ ձեռնարկել մի գործ, որ վեր է, քան մեր գիտությունն ուժը:

Իսկ այս աշխատությունը «պետք են» խոսքի վայելուչ դասավորություն, կանոնացված գիտություն օրենքի համապատասխան ճշմարիտ շարադրանք, պատկառանքով գրել ստույգը, որպեսզի իմաստասեր ունկնդիրները չպարսավեն, չեղած բաներ չավելացնել խոսքի պարապն աճեցնելով, չնվազեցնել եղածները, և կարճակտոր չպատմել անփուլթ խոսքով, այլ ամեն ինչ երևան հանել ողջախոհ զգուշությունը»¹⁶:

Ղաղար Փարպեցին Վահան Մամիկոնյանի պատվերն է կատարել ամենուր:

Մեջբերված քաղվածքները կրկին ցույց են տալիս, որ Ղաղարի ձեռքին եղել է Կորյունի խաթարված օրինակը:

Այժմ կրկիննք հանձնարարականը. «Եւ զայս թէ կամիցի ոք գիտել հաւաստեալ ի Պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան, աշակերտի նորին երանելոյն Մաշտոցի, կարգացեալ տեղեկասցի զվարս կենաց նորա և զիւր հայերէն նշանագրացն, թէ ե՞րբ կամ ո՞ւր և կամ յոյր ուրուք ձեռն ղտանէ թագաւորին Հայոց Վռամշապհոյ ջերմեռանդն խնդրելով, զոր կարգեաց գրելով ճշմարտապէս յառաջադրեալ այրն հոգեւոր Կորիւն, ուստի և մեր բազում անգամ կարդալով տեղեկացեալ հաւաստեալ»¹⁷:

Ինչո՞ւ է Փարպեցին իր ընթերցողներին խորհուրդ տալիս Մաշտոցի կյանքի և նրա հայերեն գրերի գյուտի մասին ավելի լավ իմանալու համար դիմել Կորյունին:

Պատասխանը հասկանալի է, որովհետև Ղաղար Փարպեցին Մաշտոցի կյանքի և հայերեն գրերի գյուտի մասին իր պատմության մեջ չի գրելու: Իսկ ինչո՞ւ է չի գրելու:

Որովհետև Մաշտոցի աշակերտ Աղան Արծրունու սաները, այդ ժամանակ Հայոց մարզպան դարձած Վահան Մամիկոնյանը և պատմիչ Ղաղար Փարպեցին շատ լավ գիտեին Մաշտոցի և նրա գրերի գյուտի իրական պատմությունը և չէին ուզում կրկինել այն սխալը, թե դանիելյան գրերով են ստեղծվել հայ դպրությունը, որ Մաշտոցը երկու տարի դասավանդելուց հետո վարդապետական «գեղեցիկ աստիճան» է ստացել, և երկու տարուց հետո միայն հասկացել են, որ դանիելյան գրերը հայերեն չեն:

Ղաղար Փարպեցին և պատվիրատու Վահան Մամիկոնյանը դանիելյան գրերը մերժում են:

Դանիելյան գրերը Վաղարշապատ բերելուց հետո Կորյունի գրքում «Ապա առեալ» հատվածի գոյությունը այդ տեղում պատճառ է դարձել, որպեսզի պատվիրատու Վահան Մամիկոնյանը և պատմագիր Ղաղար Փարպեցին շրջանցեն այդ հատվածը: Այն դարձել է նաև պատճառ, որ նրանք ընդհանրապես մաշտոցյան գրերի գյուտի պատմությունը չանդրադառնան և հայ դպրության ստեղծումը շարունակեն Սամոսատում սկսած

16 Նույն տեղում, էջ 13–17:

17 Նույն տեղում, էջ 30:

թարգմանությունից, իսկ հայոց գրերի գյուտի մասին կարդան Կորյունի մոտ, որին հավատում է ինքը անվերապահորեն: Այսինքն. «Իսկ երբ հասկացան, որ այդ (դանիելյան) նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սիդորաները-կապերը ամբողջութամբ արտահայտելու համար, մանավանդ, որ նշանագրերն էլ, իսկապես ուրիշ դպրություններից քաղված և հարություն առած հանդիպեցին – ապա դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան, և մի քանի ժամանակ մի ելք էին փնտրում դրան»:

Այստեղ վերջանում է դանիելյան նշանագրերի կյանքը և սկսվում է մաշտոցյան նշանագրերի «որոնումների» շրջանը: Նախ և առաջ այդ նշանագրերը պետք է բավական լինեին հայերեն լեզվի սիդորաները-կապերն ամբողջութամբ արտահայտելու համար, մանավանդ որ նշանագրերն էլ «իսկապես ուրիշ դպրություններից քաղված և հարություն առած» չպիտի լինեին: «Դրա համար երանելի Մաշտոցը՝ Արքայի հրամանով և ս. Սահակի համաձայնությամբ, մի խումբ մանուկներ առավ հետը և սուրբ համույրով միմյանց հրաժեշտ տալուց հետո, ճանապարհ ընկավ, գնաց հայոց արքա Վուստյանի հինգերորդ տարում, և գնաց հասավ Արամի կողմերը, Ասորոց երկու քաղաքները, որոց առաջինը Եդեսիա է կոչվում, երկրորդի անունն է Ամիգ...»¹⁸:

Եղևիստյում Մաշտոցը «շատ նեղություններ քաշեց իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստծուց իսկապես պարզեց նրան (այդ) ըմբռնումը. նա իր Սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ, հայերեն լեզվի նշանագրեր»:

Այստեղ Մաշտոցը ստեղծեց հայոց լեզվի նշանագրերը. «Եվ այնտեղ, Եղևիստյում, շուտով նշանակեց, անվանեց ու դասավորեց, հորինեց սիդորաներով կապերով»: Այսինքն ստեղծեց հայոց այբուբենը. «Եվ ապա հրաժեշտ տալով սուրբ կախկոպոսին, իր օգնականների հետ միասին իջավ Սամոսաս քաղաքը... Եվ հենց այնտեղ նույն քաղաքում գտավ, հելլենական դպրության մի գրագիր Հոսիանոս անունով, որի ձեռքով նշանագրերի բոլոր դանագանությունները՝ յարակն ու հաստը, կարճն ու երկայնը, առանձինն ու կրկնավորը ամբողջապես հորինելուց և վերջացնելուց հետո», այսինքն տառերը հարգարելուց և գրատեսակները՝ առանձինն ու կրկնավորը ստեղծելուց հետո, ձեռնարկեց թարգմանության:

Մաշտոցն իր ուսանողներով, ստեղծված գրերով, այդ գրերով գրված գրքով Սամոսասից վերադառնում է Վաղարշաստ և այստեղ սկսում է իր զործունեությունը՝ շարունակելով Սամոսասում գրերի գյուտից հետո ձեռնարկած թարգմանական գործը, որտեղ շատ օգտակար դործ կարող էր կատարել նաև սուրբ Սահակը և կատարում է. «Եւ այսպէս դիպեալ գիւտի

18 Կ ո Ր Ե Ն, էջ 47: Այստեղից էլ Հոսիանոսի ծառայության մյուս կողմը, գրերի հարգարմանը օգնելուց հետո նա օգնել է Մաշտոցի աշակերտներին թարգմանության ժամանակ, քանի որ հելլենական դպրության հմուտ այլ գիտակ Եդեսիայում չգտնվեց:

Այդ առթիվ նիկոլ Աղբալյանը գրում է. Մաշտոցը «... գործի անցնելով կը թարգմանե Առակաց գիրքը, բայց Մեսրոպը ինքն է, որ կթարգմանե և Հոսիանոս գրի կառնե, միաժամանակ աշակերտներուն գրել սովորեցնելով:

Արդ, այդ Հոսիանոսը, կը կարծեմ, հայերեն գիտեր, կրնա ըլլալ, որ հայ մըն էր, որովհետև Առակաց թարգմանությունը, որ Մեսրոպ կը կատարեր, հույնը պիտի հասկանար, որ գրի առներ: Նվաղագույն պարագային հայագետ հույն մը կրնա ըլլալ» (Ն ի կ ո Ւ Ա ղ ր Բ ա լ Ե ա ն, Ամբողջական երկեր: Պատմութիւն Հայոց գրականութեան. Պեյրութ, 1970, էջ 308):

նշանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշտոց, յերկրելով զնա Սուրբ Հայրապետին Հայոց Սահակայ, դիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգազրութեան գրենոյս և հեզենային ուղղաձայնութեան: Տալով նմա օգնականս և այլս բանիբունս և մտացիս ի քահանայիցն Հայոց»¹⁹:

Իսկ Կորյունը այդ առթիվ գրում է. «Ապա առեալ երանելի Հոգաբարձուացն զհանկարծադիւտ խնդրելին, հայցէին ևս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն արծարծել մարթասցեն: Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել, որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ՝ երանելին հասանէր, և իբրև ամս երկու կարգեալ իւր և նովին նշանագրովք տանէր: Եւ այնպէս միջամուկս եղեալ հանգամանօք օրինապարտութեան, մինչև բնաւ արտաքոյ իւրեանց բնականութեանն գերծանել:

Եւ ի ձեռն առեալ այնուհետև աստուածագործ մշակութեամբ զաւետարանական արուեստն՝ ի թարգմանել, ի գրել և յուսուցանել»²⁰:

Դարձյալ թարգմանությունն է առաջնայինը: Թարգմանությամբ պետք է նյութ մատակարարվեր նորաստեղծ մատենագրությանն ու դպրոցին, որպեսզի ամենուր «գրել և յուսուցանել», «որպէսզի բոլոր մարդկանց հասնի քրիստոսաբեր փրկությունը»:

Թարգմանություններին հետևում էր ս. Սահակը, «Վասն զի ոչ լինէին բաւական ի վճարել անսխալ ուղղակի, առանց առաջնորդելոյ նոցա սրբոյ Հայրապետին Սահակայ, որ յոյժ աուցեալ անցուցանէր վարժիւք զբազում գիտնաւքն Յունաց, եղեալ կատարելապէս հմուտ քերթողական տառիցն ու հոետորական յորդասաց յայտնարեբութեան, ևս առաւել տեղեկացեալ փրկիսոփայական արուեստից ցուցանիւր:

Կարգեալ այնուհետև Փրկչի առաջնորդութեամբ, զիւր գրենոյն հայերէնի և հելլենացին ուղղեալ յօրինուածս ցանկային կարգել դպրոցս և ուսուցանել բազմութիւն մանկտուոյ, քանզի ամենայն անձն յորդորեալ փափագէր յուսումն հայերէն գիտութեան, որպէս ի խաւարէն, յասորի տանջանացն, գերծեալք ի լոյս փութային»²¹:

Նույն իրադարձություններին մասին Խորենացին գրում է. «Եւ յարուցեալ յաթիւրցն՝ եստեղծ զնշանագիրս մեր: Հանդերձ Հռոփանոսիւ կերպաձևեալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրոպայ, փոխագրելով զհայերէն աթուղթայսն ըստ անսայթաքութեան սիւզաբայիցն Հելլենացւոց:

19 Ղ ա զ ա Ր Փ ա Ր պ ե ց ի, էջ 34:

20 Կ ո Ր յ ու ն, էջ 92:

21 Ղ ա զ ա Ր Փ ա Ր պ ե ց ի, էջ 36: Պատմաբան Բագրատ Ուրուբաբյանը Ղազար Փարպեցու «Հայոց պատմություն. Թուղթ Վահան Մամիկոնյանին» աշխատանքի աշխարհաբար թարգմանության մեջ «Եւ այսպէս դիպեալ դիւտի նշանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշտոց» նախագասությունը աշխարհաբար ներկայացնելիս «գիւտի նշանագրացն» բառակապակցությունը բերել է «Հայոց նշանագրերը» ձևով, իրավամբ գտնելով, որ «գիւտին» բառը վերաբերում է միայն մաշտոցյան նշանագրերի գյուտին: Այդ իմաստով է այն գործածել ս. Սահակի կողմից «ճեպեա յաղագս մեծ և օգտակար աշխարհիս Հայոց գիւտի այսօրիկ», որտեղ նկատի ունենին Հայոց նշանագրերի գյուտը:

Փարպեցին «գիւտի նշանագրացն» այդպես էլ ընկալել է, քանի որ մաշտոցյան գրերն են գյուտի ծնունդ, որոնց պատմությունը կարողուհ համար հղում է Կորյունի գիրքը:

Այս հատվածը ոչ մի կապ չունի գանիելյան գրերի հետ, ինչպես ներկայացնում են:

նւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսեալ յԱռակացն»: Թարգմանելու և գրելու հետ «միանգամայն և զարուեստ գրչութեան ուսուցանել տալով իւրոց մանկագոյն աշակերտացն»²²:

Ուրեմն, ինչպէս տեսնում ենք, Եգեսիայում մաշտոցյան գրերն ստեղծելուց հետո, այդ գրերով առաջին թարգմանութեանը նախորդել է «զհայերէն աթութայսն սիլորայիցն հելլենացւոց յիոխաղրելով»՝ Սամոսատում «Հանդերձ Հոռփանոսիւ»: Այնպէս էլ Վաղարշապատում «Երանելին Մաշտոց», ըստ Ղազար Փարպեցու Պատմութեան, «յերիւրելով զնա սուրբ Հայրապետին Հայոց Սահակայ, զիւրահնար ճանասարհ ցուցանելով կարգադրութեան գրենոյս և հեգենային ուղղաձոյնութեան տալով նմա օգնականս և այլ արս բանիւրուսս և մտացիսի քահանայիցն Հայոց... որոց օգնելովն զօրէր երանելի Մաշտոց, Հանգիսեցուցանէր զհայերէն աթութայսն ըստ կարգման սիլլուրայիցն Յունաց, ստէպ հարցմամբ և ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Սահակայ՝ զաթութայիցն զազափար, ըստ անսայթադութեան յունիսն»:

Ուրեմն, Համեմատութեան այս դործողութիւնն այստեղ ոչ թե հայերեն գրերի ստեղծմանն է վերաբերում, այլ թարգմանութեան ընթացքում բառերի և բառակապակցութիւնների Համեմատութեանը:

* * *

Ամենայն հավանականութեամբ Մովսէս Խորենացու ձեռքում նույնպէս եղել է Կորյունի դրքի խաթարված օրինակից, ինչպէս հետագայում Ղազար Փարպեցու ձեռքում: Բայց քանի որ Մաշտոցի աշակերտ Մովսէս Խորենացին նույնպիս շատ լավ իմացել է իր ուսուցչի արարչագործութիւնը, ինչպէս և նրանից առաջ ու հետո տեղի ունեցած իրադարձութիւնները, 474 թ. ավարտած «Պատմութիւն Հայոց Մեծագ» պատմագրքում ճշմարտացիորեն շարադրել է եղելութիւնները: Առաջին մարդ Աղամից մինչև Հայոց Արչակունիների թագավորութեան բարձումը ամփոփող հազարամյակների պատմութեան մեջ մեկական գլուխ նվիրված «Մաշտոցյան նշանադրացն ի վերնոյն տուելոց շնորհաց» (ՄԳ), «Յաղագս դպրութեան Հայոց, Վրաց և Աղուանից» (ՄԴ) և մի առանձին գլուխ դրանից առաջ «Յաղագս Դանիէլի նշանադրացն» (ՄԲ), համարյա նույն ծավալով:

Մեր կարծիքով, Մովսէս Խորենացին դանիելյան գրերը այսպիսի ուշադրութեան արժանացրել է նրա համար, որ (ինչպէս երևում է նաև Մատենադարանում պահվող նրա «Պատմութեան» մագաղաթյա պատասխանից²³, որն անեղծորեն պահպանում է դանիելյան գրերի պատմութիւնը) նկատել է Կորյունի պատմութեան մեջ դանիելյան գրերին նվիրված հատվածի անհարիրութիւնը հաջորդող հատվածների հետ:

Դեռևս միջնադարում եղծել են Պատմահոր դանիելյան նշանագրերի վերաբերյալ բնագիրը, և հարմարեցրել Կորյունի «Վարք Մաշտոցի» դանիելյան գրերի պատմութեան ըզմանակութեանը:

22 Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի. Հայոց պատմութիւն, աշխարհաբար թարգմանութիւնը և մեկնաբանութիւնները Սա. Մալխասյանցի, Երևան, 1981, էջ 404:

23 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1411: Տես նաև՝ Ս. Գ ո լ ա ն ջ - յ ա ն. Մովսէս Խորենացու նորահայտ երկաթագիր պատասխանը և դանիելյան նշանագրերի օգտագործման ժամանակի հարցը. - «Բանբեր Մատենադարանի», № 4, էջ 163-182:

Մովսես Խորենացին առանձին վերնագրի տակ շատ տեղեկություններ է տալիս ժամանակի մասին և ավելի հանգամանորեն ներկայացնում դանիելյան գրքերի ծագումն ու վախճանը:

Բերում ենք մեզ հետաքրքրող մասը պատառիկից և տպագրից²⁴.

Ջոր առեալ եւ երթեալ նովաւ հանդերձ քաջամտացեալ ի Դանիէլէ կարգեալ ի ձեւոյ աւրինակի յունականին զվաղնջուց գրեալ շարագիրս տառից եկեալ ետուն ցմեծն Սահակ եւ Մեսրոպ: Որոց առեալ եւ թեւածելով ընդ նոսա եւ տղայս ղոմանս, սակաւս տեղեկացեալ գիտացին ոչ լինել (բաւական այնու նշանագրաւք ստոյգ հոլովել զհեզենայ բառից հայկականաց հազներգաբար մուրացածոյին այնուիկ գծագրութեամբ):

Ջոր առեալ և երթեալ նովաւ հանդերձ քաջ հմտացեալ ի Դանիէլէ կարգեալ ի ձեւոյ օրինակի յունականին զվաղնջուցն գրեալ շարագիր տառից եկեալ ետուն ցմեծն Սահակ և Մեսրոպ: Որոց ուսեալ, և թեւածելով ընդ նոսա տղայոց զամս սակաւ տեղեկացեալ գիտացին ոչ լինել բաւական այնու նշանագրաւք ստոյգ հոլովել զհեզենայ բառից հայկականաց հազներգաբար մուրացածոյին այնուիկ գծագրութեամբ:

Ինչպես տեսնում ենք, պատառիկում եղած որոշ բառեր ու արտահայտություններ «չարափոխված» են և հարմարեցված մեզ հասած Խորենացու ամբողջական պատմություն մեզ Կորյունի գրքի խաթարված բնագրին²⁵:

«Քաջամտացեալ» բառը №1411 պատառիկից բացի օգտագործված է նաև «Գիրք Պիտոյից» գրքում, «քաջամիտ» ձևով, և նշանակում է «սրամիտ, կորովամիտ», նաև գոյականաբար «սրամտություն», «կորովամտություն»: Համարյա նույնն է Խորենացու պատմություն բնագրում «յարմարեալ ի Դանիէլէ» բառակապակցություն մեջ, քանի որ «զվաղնջուց գրեալ յունական գրերից» «յարմարացեալ» է «հայկականացս լեզուի աղփաբետներ» առանց աղբյուրը նշելու:

Դանիելի կողմից կարգված «ի ձեւոյ աւրինակի յունականին զվաղնջուց գրեալ շարագիրս տառից» նշանակում է «վաղնջուց գրված հունական մատենագրական երկերից» քաղված նշանագրեր, որը նույնն է Կորյունի «յայլոց դրութիւններից» քաղված նշանագրերի հետ:

Դանիելյան գրերը բերում հանձնում են ս. Սահակին և Մեսրոպին, «որոց առեալ» բառը փոխված է «որոց ուսեալ» բառով:

«Տղայս ղոմանս սակաւ տեղեկացեալ գիտացին» փոխված է. «Տղայոց ղամս սակաւ տեղեկացեալ գիտացին»:

Այս խեղաթյուրումների ամբողջական պատկերը երևում է պատառիկի և գիտական բնագրի համեմատությունից, որ բերել ենք վերևում:

24 Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի. Հայոց պատմություն. Երևան, 1991, էջ 325:

25 Ա. Մ թ և ո ս յ ա ն. Մովսես Խորենացին մեսրոպյան գրքերի մասին. — «Պատմաբանասիրական հանգես», 1990, №3, էջ 100–117: Մատենադարանի №10000 ձեռագիրը Մովսես Խորենացու «Հայոց Պատմություն» է, գրված 1671 թ. Ներսես Լամբրոնացուն պատկանած ձեռագրից (XII դ.), որը մեզ հասած Խորենացու պատմության ամենավաղ ձեռագրի (XIV դ.) հետ ոչ մի տարբերություն չունի: Անաղարտ պատառիկը VIII–IX դարերից է:

Խորենացին իր «Պատմութեան» մեջ առանձին գլուխ է նվիրում դանիելյան գրերին և շարադրում ճշմարիտ պատմութունը: Դանիելյան գրերի մասին ամենաճշմարիտ շարադրանքը Խորենացու «Պատմութեան» պատառիկի վրա պահպանված բնագիրն է, որը մաշված և քայքայված է վերջից, բայց եղծված, հարմարեցված է, ինչպես ամբողջական բնագրում, որի ամբողջական հնագույն ձեռագիրը XIV դ. է: Աղծատումը եղել է XIII դ. առաջ:

Մովսես Խորենացու պատմածը դանիելյան գրերի մասին, լրիվ համապատասխանում է Կորյունի պատմածին, առանց խախտված «Ապա առևալ»-ով սկսվող հատվածի: Բանն այն է, որ երկուսն էլ Վաղարշապատի արքայահիմն Սահակ-մեսրոպյան վարժարանի աշակերտներն են և հայոց գրերի ու հայ գաղության սկզբնավորման մասին դրել են իրենց լսած միևնույն ճշմարտացի պատմութունը:

* * *

Այժմ այդ երկու հատվածների տեղերը փնտրենք հայ գրչութեան արվեստի, հնագրագիտութեան և ձեռագրագիտութեան օժանդակությամբ: Դրա համար անհրաժեշտ է վերստեղծել ձեռագրի հեղինակային օրինակը, այն մատյանի նամակը (մանրակերտ), որտեղ սույն հատվածները գտնվել են իրենց հեղինակագիր տեղում: Ուստի, նախ խախտված օրինակից կգանք նրա նախագաղափար օրինակը, և այդ օրինակի վրա ցույց կտանք խախտումը:

Հեղինակային օրինակի մանրակերտը վերստեղծելու համար անհրաժեշտ են հնագրական և ձեռագրական որոշակի հիմքեր: Այդպիսի հիմքեր կան:

Ձեռագիրը պատմամշակութային հուշարձան է, ունի իր ստեղծման օրենքներն ու օրինաչափությունները: Այն ոչ միայն այս կամ այն գիրն ու բնագիրը պարունակող մատյան է, այլ ինքը, որպես պատմամշակութային հուշարձան, ունի ստեղծման իր առանձնահատկություններն ու օրինաչափությունները, որոշակի բաղադրիչներն ու միավորները, որոնց ներդաշնակ համադրությամբ դառնում է ձեռագիր: Նույն չափսի պետք է լինեն բոլոր թերթերը հաստատուն տողաքանակով: Նույն մեծությունը պետք է ունենա զրադաշար լինի միասյուն թե երկսյուն, սյունակները՝ նույն մեծությամբ, հավասար միջնալուսանցքով և եզրային լուսանցքներով, բառանջատում ունի՞, թե ոչ: Վերջապես, հավասար քանակի թերթեր պետք է ունենա ձեռագրի ամեն մի պրակ:

Մենք գտնում ենք, որ «Ապա առևալ» և «Յայնժամ վաղվաղակի» հատվածներից յուրաքանչյուրը Կորյունի «Մատյանում» մի առանձին թերթ են եղել՝ իրար կից, նախքան խախտվելը, այդպես էլ (այսինքն՝ մեկական թերթ), իրար կից, մնացել են խախտումից հետո: Այս հատվածներն ունեն հավասարաչափ բնագիր, տողերի, տառերի հավասար քանակով, բառանջատված է: Սույն բնագրերը ձեռագրում գրված են եղել մի-մի թերթի երկու էջերում, հավասար տողաքանակով:

«Բազմավեպի» 1989, 1990 թվականներին հրատարակած մեր ուսումնասիրությունների մեջ²⁶, ապա 1994 թ. Երևանում հրատարակած «Վարք ս. Մեսրոպ Մաշտոցի» գրքի հավելվածում («Վարքի» երկու հատվածների տեղափոխություն», նախորդի ուսումնասիրության համառոտվածում) մենք կրկին անդրադարձանք «Ապա առեալ» հատվածին և «Դանիելյան գրերի» հարցին²⁷:

Վերականգնեցինք Կորյունի ձեռագիրը Գ. Ֆրանգլյանի երուսաղեմյան հրատարակության հիման վրա (Երուսաղեմ, 1930): Ի տարբերություն Մ. Աբեղյանի, այստեղ հատվածումներ չկան: Ընդունելով, որ «Ապա առեալ» հատվածը զբաղեցրել է ձեռագրի մեկ թերթը, որին կից է եղել «Յայնժամ վաղվաղակի» հատվածը: Պրակները վերականգնելուց հետո, վերականգնեցինք ամբողջ ձեռագիրը, հաշվի առնելով V գ. Հնագրության մակարդակը:

Պարզվեց, որ Մեսրոպ Մաշտոցի մասին Կորյունի փոքրիկ գիրքն ունեցել է 12 թերթանոց 8 պրակ (Ա, Բ, Գ, Զ, Է, Ը, Թ, Ժ), 14 թերթանոց 1 (Դ) պրակ, 10 թերթանոց 1 (Ե) պրակ և վերջին պրակը (ԺԱ)՝ 8 թերթանոց:

Հետագայում ձեռագիրը առաջին անգամ վերակազմելու ժամանակ, որին ներկա չեն եղել ո՛չ Կորյունը, ո՛չ էլ Հովսեփ ստացողը, Ե պրակի առաջին և վերջին միացյալ թերթերը դրվել են Դ պրակի վրա՝ սկզբից և վերջից և այն դառել է 14 թերթանոց: Այդ թերթի վրա էին. «Ապա առեալ» և «Յայնժամ վաղվաղակի» հատվածները: Եվ վերակազմվելուց հետո ստեղծվել է շփոթը:

Մենք իրար կից այդ թերթերը Դ (14 թերթանոց) պրակից վերցրինք և տեղադրեցինք նրան կից Ե (10 թերթանոց) պրակի վրա՝ սկզբից: Բոլոր պրակները հավասարվեցին, իսկ բնագիրը ստացավ Կորյունի շարադրանքը:

Ամեն դեպքում այժմ մենք ունենք մի պրակի առաջին թուղթը, որը միաժամանակ պրակի առաջին և վերջին թերթերն են, այսինքն «Ապա առեալ»-ը պրակի առաջին թերթն է, «Յայնժամ վաղվաղակի»-ն՝ վերջին թերթը:

Ձեռագրերում թերթերի կամ թղթերի, նույնիսկ պրակների շփոթ հաճախ է պատահում, որը մեծավ մասամբ կապվում է կազմարարության հետ: Այսպես, Մատենադարանի №2679 ձեռագիրը՝ գրված 981 թ., հայտնի Հնագույն թղթյա ձեռագիր ժողովածու է: 1585 թ. Սիմեոն Ապարանցի րա-

26 Կ ո Ր Ե Ն. Վարք ս. Մեսրոպ Մաշտոցի, աշխատասիրություններ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1994: Հավելված Վարք երկու հատվածների տեղափոխություն, էջ 148-172:

27 Այս երկու թերթերի տողերի ու տառերի քանակը իմանալով, մեղ հայտնի դարձավ ձեռագրի յուրաքանչյուր թղթի տողերի ու տառերի քանակը:

Այսքանը իմանալուց հետո, հաշվեցինք երկու թերթերի (հատվածների) և դրանց միջև տեղավորված թերթերի վրա դրված բնագրի տողերի ու տառերի քանակը, բաժանեցինք առաջին թղթի տողերի ու տառերի վրա և ստացանք թղթերի ու թերթերի այն քանակը, որից կազմվում է սույն պրակը: Այդպես վարվեցինք նաև դրանից առաջ և դրանից հետո ընկած պրակների հետ:

Այս բոլորի արդյունքը եղավ այն, որ մենք ունեցանք բուն ձեռագրի նամակը: Պրակները կարգավորելուց հետո, ակնհայտ դարձան խախտված պրակները և դրանց կարգավորությունն արգեն տեխնիկայի գործ է: Շփոթած թուղթը տեղավորվեց իր նախնական տեղում և ունեցանք Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի հեղինակային օրինակի առաջին ընդօրինակության մանրակերտը:

բունապետը քայքայված ձեռագիրը կարգավորում, դասդասում է ըստ պրակների, նշանակում է պրականիշերը և հանձնում կաղմարարին:

Կաղմարարը ոչ միայն թերթեր, այլև պրակներ է խառնել: Պատվիրատու Սիմեոն Ասպարանցին սկսում է լուսանցքներում նշել խառնված տեղերը. «Ով եզրայր, ժ թղթով առաջ գնա և դտանես» (93 ք):

Հազբատի Ավետարանի կաղմողը ոչ միայն պրակներից երկուսն է հետև-առաջ կաղմել, այլև հիշատակարանի երկու թղթերը:

Սա բացասարկում է կաղմարարների բնագրին անձանոթությամբ:

Թղթի վերատեղադրումից հետո կորյունյան շարադրանքներն այնպիսի տեսք ունեն, ինչպիսին ներկայացրել ենք մեր նոր ուսումնասիրությունների և հրատարակության մեջ²⁸:

Փակագծերում Մ. Աբեղյանի հրատարակության էջերն են:

Գ—պրակ, թ. 12ա «Որ էր մերձաւոր Դանիէլի ասորւոյ եպիսկոպոսի.

Իսկ Հաբելին գայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլն, եւ նախ ինքն աեղեկանայր ի Դանիէլէ նշանագրացն, եւ ապա առեալ ի 12բ նմանէ առաքէր առ արքայն // յերկիրն Հայոց: Ի հինգերորդ ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր: Իսկ արքային հանդերձ միարան սրբովքն Սահակաւ եւ Մաշտոցիւ ընկալեալ գնշանագիրսն ի Հաբելէն, ուրախ լինէին:

Դ — թ. 1ա. Իսկ իբրեւ ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն ողջ ածել զսիւղորայս զկապս հայերէն լեզւոյն, մանաւանդ զի եւ

1բ նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց քաղեալք եւ յարուցեալք դիպեցան // յևու այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոդս դառնային, եւ նմին եյս խնդրէին ժամանակս ինչ: Վասն որոյ առեալ երանելոյն Մաշթոցի դաս մի մանկտոյ հրամանաւ արքայի եւ միաբանութեամբ...

Դ — պրակ, թ. 12ա ... քաղաքն, ազգ լինէր թագաւորին եւ սրբոյ եպիսկոպոսին: Որոց առեալ դամենայն նախարարագունդ աւագանւոյն ամբոխ, ի քաղաքէն ելեալ պատահէին երանելոյն զափամբ Ռահ գետոյն: Եւ զցանկալի // ողջոյնն միմեանց տուեալ, ուստի եւ բարբառաւք ցնծութեան եւ երգաւք հողեւորաւք, եւ բարձրագոյն աւրհնութեամբք, ի քաղաքն դառնային, եւ դաւուրս տաւնական ուրախութեամբ անցուցանէին:

/92/ Ե — պրակ, թ. 1ա. Ապա առեալ երանելի հոգաբարձուացն ղյանկարծագիւտ խնդրելին, հայցէին եւս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն արձարծեալ մարթասցեն: Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա // հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել, որով եւ յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ երանելին հասանէր, եւ իբրեւ ամս երկու կարգեալ

/102/ 2ա զվարդապետութիւն իւր, եւ նովին նշանագրովք տանէր: // Եւ այնպէս միջամուխ եղեալ հանգամանաւք աւրինապատգամացն մինչև բնաւ արտաքոյ իւրեանց բնականութեանն գերծանել»:

28 Ա. Մ ա թ և ո ս յ ա ն. Կորիւնի Մեսրոպ Մաշտոցի պատմութեան ձեռագրի մի թղթի տեղափոխութիւն. Վեներտիկ, 1990, էջ 22–30, ն ու յ ն ի՝ Կ ո ղ ու ն. Վարք ս. Մեսրոպ Մաշտոցի, էջ 148–172:

Բանն այն է, որ Գ պրակի վերջին թերթն ավարտվում է «Իսկ արքային Հանդերձ միաբան սրբովքն Սահակաւ եւ Մաշթոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հարելէն, ուրախ լինէին» նախադասութեամբ, իսկ շփոթած թուղթն սկսվում է նույն մարդկանց հիշատակութեամբ. «Ապա առեալ երանելի հոգաբարձուացն ...»:

Այս հանգամանքը բացառել է ամեն տեսակի կասկած, և հետագա շարադրանքի վրա էլ չեն կասկածել և աշխատել են պատճառաբանել:

/108/ Ե – պրակ, թ. 11ա. «Եւ անդ ընդելական սովորութեամբն ի կիրարկեալ զվարդապետութիւնն՝ հաւասարութեամբն բարեպաշտին

11բ Շաբիթայ, զի առնէր զգաւառն ողջունիւ աւետարանիւ Քրիստոսի, եւ կարգէր յամենայն գիւղս // գաւառին դասս սրբոց վանականաց: Որում եւ հասեալ ժամանեալ հայրաբարուին Գտայ, որդւոյ Շաբաթայ, առն քրիստոսասիրի բազում սպասաւորութիւն իբրեւ հաւասարի որդւոյ վարդապետին տանէր:

/102/ թ. 12ա. Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ զխուժադուժ կողմանսն Մարաց, որք ոչ միայն վասն

12բ ղիւական սատանայակիր բարուցն ճիւղութեան, այլ եւ վասն ինքնեկագոյն // խոշորագոյն լեզուին՝ զգժուարամտոյցք էին, առ ի յարդարել եւ զնոցա հարուստ ամացն ծնունդս առեալ՝ պարզախաւսս, հռետորաբանս, կրթեալս, աստուածատուր իմաստութեանն ծանօթս կացուցանէին:

/108/ Զ – պրակ, թ. 1ա. Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն ելանէր: Եւ անդ աստուածասէր Հնազանդութեամբ ընկալեալ զնա իշխանին Սիւնեաց, որ էր Վաղինակ անուն»:

* * *

Զեռագրագիտական, հնագրագիտական քննութեան ընտրած եղանակը հաստատեց սլրակաթղթի մասին մեր ենթադրութիւնը, և վերականգնելով պրակը, մենք հասանք այն ցանկալի արդյունքին, որը մինչ այդ հաստատել էինք նաև պատմաբանասիրական քննութեամբ: Համաքննութիւնը միմյանց լրացնելով, արդարացրեց Կորյունի Մատյանի և պրակի առաջին թերթի վերաբերյալ կասկածների իրավացիութիւնը և վերատեղադրման ճշմարտացիութիւնը:

Առաջին. Ղաղար Փարպեցու «Հայոց պատմութեան» մեջ նկատված «եղծումները», «աղճատումները» և որոշ թերթմբռնումներ հետևանք են ոչ թե Ղաղար Փարպեցի հեղինակի, այլ գալիս են Կորյունի հետագայում խաթարված բնագրից: Հետևաբար Ղաղար Փարպեցուն տրված դնահատականները միակողմանի են, տեղ-տեղ անարդար:

Երկրորդ. Ղաղար Փարպեցին ընթերցողին առաջարկելով Կորյունի գործը Մաշտոցի և նրա գրերի գյուտի մասին ավելի լավ իմանալու համար, դրանով զգացնել է տալիս, որ իր գրքում Մաշտոցի վարքի մասին և նրա ստեղծած գրերի գյուտի մասին չի գրելու:

Երրորդ. «Գիւտ նշանագրաց» ասելով Ղաղար Փարպեցին նկատի ունի հայոց գրերը, մեսրոպաստեղծ, «գիւր» հայերեն նշանագրերը:

Կորյունը գրքի գյուտի նախօրյակի մասին պատմում է. «... Ապա ելանէր նոցա պարգևական յամենաբարին Աստուծոյ, ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և ի դիւտ նշանագրաց Հայաստան ազգին Հասանել»²⁹: Երբ ս. Սահակն ու Մաշտոցը Վռամշապուհ թագավորին հորդորում էին «Ճեպեա յաղագս մեծ և օգտաբեր աշխարհիս Հայոց գիւտիս այսորիկ՝ ի ժամանակս քո»³⁰ նոր ստեղծվելիք գյուտի մասին է որ ակնարկում էին:

Մաշտոցը մեկնում է Ասորիք «ի գիւտ նշանագրացն» և վերադառնում Վաղարշապատ «ղյանկարծագիւտ» (Կորյուն) մաշտոցյան գրքերով, մաշտոցագիր մատյանով, այդ գրքերին տիրապետող սաներով: (Կորյուն)

Արքայական, վեհափառական, համաժողովրդական ընդունելութունից հետո շարունակվում է Սամոսատում սկսված աշխատանքը՝ թարգմանել և ուսուցանել (Կորյուն): «Եւ այսպէս դիպելով գիւտի նշանագրացն՝ ձեռն ի դործ արկանէր երանելին Մաշտոց, երիւրելով զնա Սուրբ Հայրապետին Հայոց Սահակայ...»³¹: Նույնն են անում Վաղարշապատի արքայահիմն մաշտոցագիր առաջին դպրոցի շրջանավարտները. «ի ձեռն առեալ այնուհետև աստուածագործ մշակութեամբ զաւետարանական արուեստին ի թարգմանել, ի գրել, ի յուսուցանել» (Կորյուն):

Սույն տեղափոխութունը շատ կարևոր նշանակութուն է ստանում Վաղարշապատի արքայահիմն, մաշտոցագիր դպրոցի առաջին երկու տարվա պատմութեան համար և ներկայացնում նրա սկզբնավորութեան ճշգրիտ ու բովանդակալից պատկերը: «Յայնժամ վաղվաղակի» հատվածը (որը թյուրիմացարար հաջորդում էր Մեսրոպ Մաշտոցի Վաղարշապատ վերադառնալուն) Կորյունի մոտ ավարտվում է. «Առ ի յարգարել և զնոցա հարուստ ամացս ծնունդս առեալ՝ պարզախօսս, հռետորաբանս, կրթեալս աստուածատուր իմաստութեանն ծանօթս կացուցանէին» հատվածով և վերաբերում է մարերին, նրան հաջորդող «Եւ այնպէս միջամուխ եղեալ Հանդամանօք օրինասպառամացն, մինչեւ բնաւ արտաքոյ իւրեանց բնականութեանն դերծանել» նախադասութունը, որը գտնվում է նրա հաջորդ պրակի առաջին թերթի վրա, վերաբերում է Վաղարշապատ արքայահիմն, մաշտոցագիր դպրոցի առաջին երկու տարիների շրջանավարտներին, որոնք էլ իմացութեամբ հեռացան իրենց անուսում ազգակիցներից, ծնողներից, եղբայրներից ու քույրերից:

Սրանից հետո է միայն, որ այդ աշակերտները «Աստուածային» գործի մշակութուն անելով սկսեցին ավետարանական արվեստը թարգմանել, գրել և սովորեցնել Վաղարշապատում:

Չորրորդ. Դանիելյան գրքերը գյուտի արդյունք չէին, ոչ էլ Աստուծո տված շնորհքից ծնված, այլ «քաղուած էին յայլոց դպրութեանց», «դրեալ էին ի Դանիէլէ», «յարմարեալ էին» «վաղնջուց գրեալ հելլենական շարագիրս տառից», «մուրացված գծագրութուններ» էին³²:

29 Կ ո Ր Յ ո Ւ Ն, էջ 89:

30 Ղ ա զ ա Ր Փ ա Ր պ ե Յ ի, էջ 32:

31 Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 34:

32 Խ ո Ր Ե ն ա Յ ի. Հայոց պատմութուն. Երևան, 1982, էջ 402:

Կորյունի «Վարք Մաշտոցի» ինքնագրում երրորդ պրակի վերջը և չորրորդ պրակի առաջին թերթերի արանքում «հայտնված» հինգերորդ պրակի առաջին թերթը հեռացնելուց հետո, որն սկսվում էր «Ապա առեալ երանելի հոգաբարձուներն» բառերով, վերականգնվում է հետևյալ բնագիրը.

Երրորդ պրակի վերջին թերթի երկրորդ (Բ) էջը.

«Իսկ արքային հանդերձ միաբան սրբովքն Սահակաւ և Մաշտոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբելէն ուրախ լինէին»³³:

Չորրորդ պրակի առաջին վերականգնված ամբողջական թերթը.

«Իսկ իբրեւ ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշանագիրն՝ ողջ ածել զսիւղոբայս զկապս հայերէն լեզուոյն, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց քաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, եւ նմին ելս խնդրէին ժամանակս ինչ»³⁴:

Խորենացու մոտ ոչ միայն մերժվում են դանիելյան գրերը, այլև հայտնի է դառնում դրանց ծագումնաբանությունը՝ «վաղնջուց գրեալ», «հունական մատյաններից քաղված» լինելը³⁵:

Իսկ Ղաղար Փարպեցին, ինչպես տեսնում ենք, բոլորովին էլ չի հիշում գանիելյան գրերի գործածությունը, որովհետև այն տեղի չի ունեցել:

Ահա և Հ. Աճառյանի «վերջնական եզրակացությունը». «Դանիելյան գրերը հայերեն չէին և հայերից երբեք գործածված չէին... Եվ երբեք հայ ազգի սեփականություն չեղած: Դանիել ասորի եպիսկոպոսը ...կարծելով թե հայ լեզվի այբուբենն է, հայտնեց Վրամշապուհին, որով պատճառ եղավ սուտ լուրը տարածվելուն Հայոց մեջ»³⁶:

Կորյունի Մեսրոպ Մաշտոցի կյանքին և գործունեությունը նվիրված ձեռագրերի հինգերորդ (ե) պրակի առաջին և վերջին թերթերի սխալադրությունը (որը կարող էր միայն վերստին կազմելու հետևանք լինել) պատճառ է դարձել, որպեսզի դանիելյան գրերին վերագրվի մաշտոցյան գրերի փորձարկմանը վերաբերող «Ապա առեալ» հատվածը:

Այնուհետև, անրոհհատ ընդօրինակվելով, դարերի ընթացքում տարբեր մեկնություններ է ստացել, և տարբեր բնույթ կրել և շարունակել մաշտոցյան գրերին ուղեկցել ստվերաքայլ, երբեմն «հավասարվելով» կամ «առաջնությունը» վերցնելով մաշտոցյան գրերից՝ որոշ մատենագիրների ու մեր օրերում՝ բանասերների ձեռքով³⁷:

33 Կ ո Ր Ե Ն, էջ 80:

34 Նույն տեղում, Հավելված, էջ 148–172:

35 Խորենացին իր պատմության չորրորդ գրքի մի ժամանակագրության մեջ գրում է. «Աթենացիք սկսանին և չորս գիրս ի կիրարկանել, քանզի յառաջ ԺԶ (16) գրով վարէին» (Խ ո Ր Ե Ն ա ց ի. Հայոց պատմություն. Երևան, 1997, էջ 393):

36 Հ. Ա Ճ ա ռ յ ա ն. Հայոց գրերը. Երևան, 1999, էջ 455, 459:

37 1999 թ. Երևանի համալսարանի հրատարակչություն լույս ընծայած Վ. Սարգսյանի «Հայոց գրերի ծագումը» (ներքին վերականգնում) շարադրանքում կարդում ենք. «Եվ Կորյունը, և Խորենացին, և Փարպեցին համաձիտ են նրանում, որ դանիելյան կոչված գրերը հենց հայկական գրեր են»: Այս նշանակում է, որ հեղինակը պատմիչներին լավ չի կարողացել: «Մեծ կարևորություն պետք է տալ այն հանգամանքին, որ դանիելյան կոչված Հայոց նշանագրերի գոյություն մասին Հայաստանում ոչ ոք չգիտեր, քանզի Հայոց Վրամշապուհ թագավորից (մոռանալով, որ թագավորը այդ մասին լսել է Ասորիքում, ասորուց): Սա հիմք է տալիս ենթադրելու, թե Վրամշապուհ արքային այդ տեղեկությունն անցած պիտի լինի ժառանգաբար իբրև սերնդեսերունդ փոխանցված աղգային-սլետական զաղտնիքի պես մի բան, որն էլ «անցել է» հեղինակին (էջ 249–250): «Մեսրոպ Մաշտոցը ոչ թե

ЛАЗАР ПАРПЕЦИ О МАШТОЦЕВСКИХ ПИСЬМЕНАХ

АРТАШЕС МАТЕВОСЯН

Р е з ю м е

В, "Базмавепе" за 1989—90 гг. и в томе 38 "Серии Базмавепе" в нашем исследовании "О перестановке одного листа в рукописи Корюна "Житие Маштоца", показано, что рукопись Корюна подверглась порче, изменению. Мы восстанавливаем первые пять тетрадей рукописи, а первый лист четвертой тетради, помещенный по ошибке в начале пятой тетради, помещаем на свое место, восстанавливая авторскую последовательность размещения тетрадей Корюновской книги. В таком виде "Житие" вышло в издательстве "Айастан" в 1994 г. Что же произошло с рукописью Корюна "Житие Маштоца"? Сшивая рукопись во второй раз (в отсутствие заказчика и автора) переплетчик поместил первый и примыкающий к нему последний лист пятой тетради между третьей и четвертой тетрадями, и с этим искажением текст дошел до наших дней. Рукопись попала в руки Лазара Парпеци именно в таком виде, но поскольку и он, и заказчик Ваан Мамиконян знали истинную историю создания маштоцевских писем, они нашли другой выход, о чем и говорится в нашем исследовании. Завершая рассказ о доставке данииловских писем в Валаршапат, (где на самом деле завершается их жизнь), Лазар далее в своей Истории вместо следующего затем по первоначальному замыслу отрывка об испытании маштоцевских писем сообщает о начатой Маштоцем в Самосате работе над переводами на армянский язык и армянскими письменами, в которой участвовал и католикос Саак Партев.